

զարտ զնաւի մէջի եղեալ սապոնն : Եւ մտաք զայեխ, 'ի ծովու վերոյ շատ մարդ- յետ դարձաւ . ինձ համար եղողներն : Երբ եկաք Յէնկիլափուն՝ իսկէլէն այր և կին բրբխտրմ էին եղեր . նա խաչուկն ասաց թէ դուք դուրս ելէք զբեռներն յետոյ կամաց կամաց կու հանեմք . ես այլ եղբայրս և աներձագս զրի բեռներ- րուն վերայ , ելայ դուրս : Առ ընտի քե- զի զալապալըխ քան զչափն աւելի . մինչ և 'ի քօչէն եկաք՝ տահա մարդ կայր որ մեր դայն չէր աւտար . ապա աղայիս շուրջառն բերաւ Պէտան տէրտէրն , ձը- զեց վերաս և կերոնն ետուր ձեռս . ես առաջնէ և հաճի իրիցկինն յետիւէ , ե- կաք սուրբ Աստուածածին եկեղեցին մտաք , յորժամ մտայ եկեղեցին՝ այնպէս թուեցաւ ինձ , թէ առաստաղն զլուխս կու դպչեր կամ խորաննին մանտրցեր . սովորեցանք սուրբ Երուսաղէմ բարձրա- շէն եափուններն : Ապա յետ աւետարա- նին ասին զպահպանիչն . և ասացի տէր խաչատուրին թէ չորս զօլօթա տուր քահանայից . և ելաք դուրս , թագաւոր գովոլ սկսեցին : Եկաք տուն . բազում ուրախութիւն եղև :

Գոհութիւն ֆրիստոսի . Աստուածն ամենայնի ամենեցուն արժանի անէ , որ մեր նման զնան և զնան հանգիստ : Այս եղև աւարտ պատմութեանս . եղ- բայր , սակաւ ինչ ծաղկաքաղ արի , և լիակատար գրեցի . 'ի զնալն մեր էր թուական Հայոց հազար հարիւր վաթ- սունին սեպտեմբեր ամսոյ ինը , պատ- կեր աւուր կիրակի . և գալն մեր հազար հարիւր վաթսունըմէկ , յունիս ամսոյ հինգ , օրն հինգշաբթի : Յորժամ ըն- թեռնուք մի ձանձրանաք . քանզի տեղ- եաւրն և չափովն գրեցի . զոհանամ 'ի տեառնէ որ ետ կարողութիւն գրելոյ . և նմա փառք և պատիւ և գոհութիւն անդրաւ յաւիտենիւ . ամեն :

Կը շարունակուի :

ԵՐՈՒԱՆԴ

Ո Ղ Բ Ե Ր Գ Ո Ւ Թ Ի Ի Ն

ԱՐԱՐՈՒԱԾ Դ .

ՏԵՍԻԼ Ա .

ՏՈՒՐ կայ կապեալ ձեռօք 'ի բանտի , սուր ծածուկ 'ի ծոցի իւրում :

Ձայս դու ինձ հատուցանես փոխարէն , անա- գորոյն երկինք , զի՛ մեղայ եթէ 'ի բռնաւորէ աս- տի հանգուցանել հնարեցայ զերկիր : Բազըն դժպճի ոչ գիտասցէ երբէք մեղիւ զսիրտ Տու- րայ . զի՛նչ ինձ պատրաստեալ կայցէ . մի թէ յետինն 'ի չարեաց անողբելին մահ . չեմ այնչափ անարի՛ որպէս զի զարհուրել 'ի մահուանէ . եթէ բարի ինչ է մահ , կամակար մտադիւր պարտ էր մարդկան մեռանել . իսկ եթէ չար , գոնեայ յեր- կիւղէ ակնկալութեան նորա զերժանել . իսկ զի՛նչ այլ երկիւղալի գուցէ 'ի մահ : Ահաւասիկ սու- սեր մի գաղտնի՛ զոր ապաւէն վերջին առ իս ու- նիմ միշտ , թէ հարկ ինչ վեց ընդ այն ելանել քան թէ յայլոց ձեռաց անկանել : Յանգիման յերեսս իսկ յայտնեցի բռնաւորին զթշնամու- թիւն իմ , գիտաց զի ոչ պարգևք նորա ստերիւ- րեցին զիս սիրել զբռնաւորութիւն . արդ կեցի շատ . կեանք մարդոյ 'ի գործոց արգեացն չափի , ոչ 'ի խուռն համարոյ ամացն թուոյ . ո՛ւր իցեն գահիճքն իմ . զՏուրայ տեսին ցարդ արութիւն 'ի կեանս . տեսցեն 'ի մահու : Միայն կարօտիմ վերջին համբուրի սիրոյ հօրն իմոյ Արգամայ . ա՛հ , մեծ է ինձ օրս յաւուրս կենաց , յորում այսպիսոյ քաջի գտայ ես որդի . սակայն թէ թէ որպէս կամ զխորդ ոչինչ կարաց ասել ինձ յայտնի . հազիւ ինչ բանս քանի մի խօսեալ ընդ իս , ստիպեցաք բաժանիլ 'ի միմեանց ընդ մէջ գիշերին . . . Այլ զի՛նչ է շնջիւնս 'ի բանտի , ա՛հ , շաչիւն զինուց լեմ . յիմ վերայ դիմեալ գան սպանանել . հայա , սիրտ իմ , յառաջեցուրք . (գնա) Ընդ առաջ սուր 'ի սիրտ) : Ահաւասիկ եմ ես . . .

ՏԵՍԻԼ Բ .

ԱՐԳԱՄ , ՏՈՒՐ :

Արգ . Տուր , որդեակ իմ , զի՛ գործես , գարձո ըզ- սուրդ :

Տր . Արգամ , բաբէ , հայր իմ . ո՛ր աստղ բարերար առաջնորդեաց քեզ այսր : զի՛նչ արիւն է այդ որ շողայ 'ի սուրդ :

Արգ . Արիւն բանտապահացն է . յոյր ձեռս ար- ծաթ է և սուր , զի՛նչ ինչ նա տկարացի գոր- ծել . էր զոր որսացայ , էր զոր ահաբեկ արար գնդաւս , և էր զոր հարի անինայ բանալ ինձ ճանապարհ յազատել զքեզ . և փոխանակ ընդ առաջին անգթութեանն հայրախնամ գթով բա- րիս գարձուցանել կենաց որդեկիդ . (տօժանէ) : Արի եկ 'ի գիրկս իմ , սիրեցեալ որդեակ , ընկալ

զհամբոյր սիրոյ, և ներեա ինձ, որդեակ իմ, զառաջին անգթութիւնս. ահաւասիկ 'ի վրէժ այնորիկ յայս վասնդ արկի զանձն իմ փրկել զքեզ. ահ, յանկարծ գտանէի և զայլ որդեակսն իմ երկուս, և հայրաբար սիրով խնամ տանէի նոցա:

ՏՐ. Ձի՛նչ են բանդդ, ո՛հ հայր, ո՛ւր իցեն իմ եղբարք երկու անծանօթք, երբ ցուցեր դու յիս անգթութիւնս. աղէ պատմեա որ ինչ լուար 'ի Ներսէ՛հ, զոր ասացեր թէ չէ նա հայր Երուսաղայ:

ԱՐԳ. Ճանաչէս 'ի զիւցանուէր ժողովի անդ կուսիցն որ երբեմն էին յԱրամաւոր և արդ 'ի Բագարսն Երագոն զոմն անուն:

ՏՐ. Երեսօք ոչ, 'ի լուր ականջաց գիտեմ:

ԱՐԳ. Նա է մայր քո, ո՛հ, որպիսի՛ գաղանխ եբաց ինձ Ներսէ՛հ սպանեալն յԵրուսաղայ, զոր և ընդ միտ ածել սոսկուումն է ինձ. աղէ երթիցուք այժմ, ապա լուիցես զամենայն:

ՏՐ. Մի՛ ինչ զանգիտեր, հայր, ոչ ելից 'ի բանդէս, բայց երթալ ապրեցուցանել զեղբարսն իմ. ո՛յք իցեն աղէ ասա:

ԱՐԳ. Եւ ես ինքն ոչինչ գիտեմ, այլ և ոչ Ներսէ՛հ. բայց այսչափ միայն, զի 'ի տիս երկտասարդութեան առ կարօտութեան որդուց Մաժան ոմն անուն զին և առեալ 'ի ձեռն մտերմի իմոյ Ներսէ՛հ հնարեցայ գողանալ զսէր Երագոնայ, յորմէ և եղեն ինձ որդիք երկու. զոր ապա յերկիւղէ իրացն և առ զիցն ահի՛ հրաման ետու սպանանել: Իմացեալ Երագոն՝ առ մայրենի գթոյն թաքոյց անհետ արար զմանկուանս. զայստսիկ ինձ երկրորդեաց Ներսէ՛հ յոգիս ապաստան:

ՏՐ. Իսկ ապա էս, յորմէ՞ ստացար զիս:

ԱՐԳ. Ի նմին իսկ Երագոնայ երրորդ ինձ ծնար որդի. ահ ներեա ինձ, որդեակ իմ, նոյն հրաման անգթութեան և վասն քո ել յինէն. ոչ այնչափ յայնժամ 'ի զիցն ահէ քան թէ 'ի մարդկանէ. զի ծնան ինձ 'ի տան այլ մանկուանք հարազատք:

ՏՐ. Իսկ զի՛նչդ ապրեցայ էս. Երագոն մայրն մեր . . . :

ԱՐԳ. Ոչ նա, այլ նոյն ինքն Ներսէ՛հ խոնգաղատեալ զքե, առ սնոյց զքեզ անդ 'ի տան իմում, և արդ իսկ յաչս իմ է մանկութիւն քո. զայս ամենայն Ներսէ՛հ 'ի մեռանելն խոստովան եղև ինձ երզմամբ մեծաւ, և եցոյց զձեռագիր Երագոնայ՝ որ քու՛մ որդիութեանդ վկայէ:

ՏՐ. Եւ ես ինքն զարմացեալ էի, եթէ առ իմէ՞ այնպէս ջանահար լինէր Ներսէ՛հ տանել զիս ընդ իւր յանցանել ձեր առ Արտաշէս. որչափ ազերսեաց, քանիցս յարտասուս հարաւ. սակայն զիքն յայլ ինչ պահեցին զիս:

ԱՐԳ. Ոչ միշտ զիքն ձեռնկալու են մարդկան. իշխել և բաղձն կենաց աշխարհի. յանձնէ իսկ ընկալ օրինակս. բանոս և կապանքդ խրատեսցեն զքեզ ակն ածել բաղձին. ո՛ն եկ երթիցուք:

ՏՐ. Որդիդ քո կալցի՛ յանձին զայդ վատութիւն, ասել եթէ նենգաւ յայլոյ ձեռն փրկեցաւ 'ի ձեռաց Երուսանդայ: Կամ՝ մեռայց, կամ՝ ես գիտեմ զոր տանելոցս եմ:

ԱՐԳ. Յաւ եղբարդդ դեռ ևս մորմոքէ զիս. մի՛ Տուր, մի՛ և գու կրկնէր ինձ վէրս 'ի հոգի. փուլեա մի՛ յապաղեր. պատրով է ժամանակ, որոց զեղծանին նովաւ. այսչափ է աղաչել հօր:

ՏՐ. Մի՛, հայր, մի՛ բռնագատեր զիս անաստել

հրամանիդ, և ծանրագնի համարել զփրկութիւնս 'ի ձեռանէ քումմէ: Ունի՛մ էս աստ սպանդ մեծ հանել կապանացս. բանք քո վառեցին յիս հուր: Երթ՛ դու, հայր, և ես հետ ընդ հետ հասանեմ առ քեզ աւետեօք. եթէ՛ դու ակն ունիս անվասնդ ելանել աստի, առաւել ևս ես. անբաւք են իմ բարեկամք և ձեռնտուք՝ թշնամիք արքայի. այժմ՝ դան՝ ոչ անագանեսցեն. թող ինքեանք եկեսցեն հանցեն զիս որպէս միանգամ:

ԱՐԳ. Իսկ զի՛նչդ. մի՛ ստիպեր զիս, Տուր, ցասնուլ քեզ. մի՛թէ և զիս զհայրդ ընդ քեզ կորուսանիցես. աղաղակ լսեմ՝ էս զորաց շուրջ զբանտիւս, զիս ձայնեն. իմ սպառազէնք են. փութաւ և դու, քեզ մնամ 'ի բերդին. (Էլանէ):

ՏԵՍԻԼ Գ.

ՏՈՒՐ, ապա ԵՐՈՒԱՋ:

ՏՐ. Ահ, ո՛հ արդեօք նախ գայցէ, Երուսանդ եթէ Երուսաղ:

ԵՐԶ. Արգամ, ահ հայր... բա՛բէ, ո՛ւր իցէ Արգամ:

ՏՐ. Երուսաղ. մեռիր, անօրէն. նախ զարիւն քո: ԵՐԶ. Անսա, այ՛ անագորոյն. առ իմէ՞ խնդրես զարիւն իմ. զի՛նչ մեղայ կամ զի՛նչ անիրաւեցի առ քեզ. զի լուցի՛ զնենդդ, զի առաջի արքայի ոչ եղէ զքէն չարախօս ոչ զարթուցի զիս:

ՏՐ. Եղբայր էս բռնաւորին, այս իսկ բաւական յանցանք են:

ԵՐԶ. Եթէ՛ ամենայն եղբայր բռնաւորի պարտի մեռանել, աւասիկ եմ էս. ահա քեզ սիրտ իմ, հար մի՛ ակն աւնուր քրմութեան. սակայն զդոյն սուսերն երկեալ յարիւն հարազատիդ դարձո անդէն 'ի քոյին սիրտ: Եթէ՛ հանդուրժեսցէ՛ սիրտ քո զերկոսին հարազատսն քո զԵրուսանդ և զԵրուսաղ տեսանել առաջի քո 'ի բազկէ քումմէ յարեան իւրեանց մահու տարածել, և ոչ զքոյին արիւն խաւնեսցես ընդ արեան նոցա:

ՏՐ. Բա՛բէ, զի՛նչ ասես, բռնաւորն իմ է եղբայր. դո՛ւ իմ հարազատ. ո՛. զի՛նչդ, ուստի՛ գիտացեր:

ԵՐԶ. Ընդ քաղաքս ամենայն ընթանան այժմ բանք Ներսէ՛հ՝ զոր 'ի հարկէ լուեալ է և քո:

ՏՐ. Ինքն իսկ Արգամ երկրորդեաց ինձ:

ԵՐԶ. Արդ մեք իսկ եմք այն քո եղբարք երկու անհետացեալք 'ի միջոյ: Երագոն մայր մեր է ամենեցուն, և Արգամ՝ հայր հասարակաց. ահաւասիկ նամակն զոր ասացի քեզ երէկ. տես քաջ՝ միաբանին ընդ խօսից Ներսէ՛հի. (փայ նձա):

ՏՐ. (Ի Բանաւ) Եղուկ եմ, սիրտ իմ բաբախէ. (Ընէլանէ)...

Ո՛վ զիք, երանք իցեն, զի՛նչդ... իմացաւ ինչ յայսցանէ և Երուսանդ:

ԵՐԶ. Եւ ոչ դք, բայց գուցէ որչափ բանք էին Ներսէ՛հի. որ իբրև հասին և մինչև յաւնին իմ նամակդ յայսնեաց ինձ զամենայն պաղանխ խորհրդոյն. անդէն կամէի ընթանալ առ Երուսանդ, այլ նախ առ քեզ փութացայ. զի ոչ հանդուրժեսցայ սիրտ իմ թողուլ զիմ հարազատդ 'ի բանախաւարին:

ՏՐ. Իսկ առ ի՞նչ արդեօք միթէ 'ի լուծանել զիս 'ի կապանացն, արգարացուցանել զիս յաչա Երուանդայ. ա՛հ, քաւ յինէն այսպիսեալ զիմօք հանդիպել երեսաց եղբօր իմոյ, 'ի նանիր արձակեաց զիս Արգամ, ո՞ր են կապանքս. դառնամ ես դարձեալ առ ձեզ, այժմիկ արժանի եմ ձեզ և դուք ինձ. այժմիկ յուսաճատութիւն պատեցաւ զինև, եղբարց իմոց մատնիչ եղէ, արեան նոցա ծարաւեցի, զթագաւորութիւննորա խախտեցի... սակայն բռնաւոր էր... 'ի բաց կաց, Երուազ, յաչաց իմոց... ոչ կարեմ հայել 'ի նա. ո՛հ. աններելի են մեզանքս, գիտեմ զի արգարանամ առաջի նոցա, այլ զուր տարապարտուց ա մօթ միայն ժառանգեմ. (Կրօնէ Դարձեալ 'ի կապան):

ԵՐԶ. Ոչ այդպէս, Տուր. մի այդպէս, եղբայր իմ. գիտե ընտանի արեան կցորդութիւն մեզմեզ զիստութիւն սրտից. աղէ ընկալ նախ յինէն եղբայր իմ, զհարազատութեանս համբոյր. և ես նախ ներեմ քեզ զամենայն զոր մեղար առ իս:

ՏՐ. (Խորշէ) Ի բաց, երթ 'ի բաց. ա՛հ, որոց կրից պահեցին զիս երկինք:

ԵՐԶ. Եկ ապա երթիցուք առ Երուանդ. ես փոխանակ քո, եղբայր իմ, ես արգարացուցից զքեզ. չլուծանեմ զկապանսդ, դովին երթիցուք զի տառապանք ընտանութեան տաւել գիտեն իօսել քան զեզու. հայապ երթիցուք:

ՏՐ. Եւ յով երթիցուք:

ԵՐԶ. Առ Երուանդ, հաշտել ընդ նմա:

ՏՐ. Առ եղբայրն իմ, ա՛հ, և 'ի յիշատակդ միայն մեռանիմ. համբուրեցից զբռնաւորն... երգմեացուցեալ զքեզ, Երուազ, յամենայն աստուածս և յոր ինչ միանգամ սիրելի է քո յաշխարհի, այլ և զայն ասացից թէ և յարիւն հարազատութեանս. եթէ սիրես զիս, թէ քեզ եղբայր ճանաչես՝ ինչ մի միայն ինդրեմ 'ի քէն:

ԵՐԶ. Եւ իմ երգուեալ, ասա. և զամենայն կատարեմ:

ՏՐ. Սպան զիս աստանօր, և կամ լուեա զայդ ա մենայն յԵրուանդայ. գոնէ նա մի ինչ գիտացե լուեա և աշխարեա. ընդ մեզ թաղեցի խորհուրդդ. Երուանդ յընտանիս ոչ ինայէ, գոնեա դու ինայ. ես ինձ զամօթ զայդ և զառապնութիւն. թոյլ տուր ինձ մեռանել անձանօթ 'ի կապանս իմ. ապա թէ ոչ՝ երդուեալ 'ի Վահագն՝ ես ինքնին ընդ սուրս ելանեմ:

ԵՐԶ. Ա՛հ, զինչ ինդրեցեր. անգիտութեան յանցանաց ամօթ ոչ է. իբրև շրթունք մեղաւորք ա տեան և նզովէն զյանցանսն, թեթեւանան նորա: Երուանդ յեղբայր երբ չինայեաց:

ՏՐ. Մի ինչ երկբայր, այժմ սկսանի և զայդ: Ո՛հ, աւասիկ Երուանդ. յո՞ թագեաց, իբր հանդարտեցից առաջի նորա:

ՏԵՍԻԼ Դ.

ԵՐՈՒԱՆԿ, ՄԻՂՐԱՆ և առաջինքն:

ԵՐԿ. Երուանդ 'ի բանդի ընդ որդւոյն Արգամայ. 'ի բաց արարէք յաչաց իմոց զանօրէն չարագործք:

ԵՐԶ. Ա՛հ, ոչ, յո՞ տանիք սպանանել. տէր իմ եղ

բայր, աղէ միանգամ 'ի մօտոյ հայեաց յերեսս չարագործիդ, տես զարտասունն, եթէ ժուժկալ լեսցէ սիրտ քո, ոչ այն առաջին Տուր է սա:

ԵՐԿ. Արտասուելի իսկ է բաղքն իւր:

ԵՐԶ. Ո՛հ, կարի քաջ:

ԵՐԿ. Չինչ այդ տիրութիւն խառն ընդ ինգութեան յերեսս քո. եթէ կցորդ իցես չարեաց գործոց նորա, եթէ խաբեցեր զիս ստութեամբ, տարակոյս յամենայն կուսէ. զինչ, կամիցիս արգեօք 'ի հայրասպանութիւն անդր յաւելուլ և զեղբայրասպանութիւն. հայապ, պատե՛հ է վայրս, աւասիկ եմ առաջի քո:

ԵՐԶ. Ո՛հ վէրք անհնարին. քսամունք ընդ ոսկերս գնան. չեմ ես հայրասպան, եղբայր իմ, տակաւին ինչ ո՞չ գիտես. ոչ հայր մեր էր սպանեալն այն, այլ...:

ԵՐԿ. Այլ, ո՞:

ԵՐԶ. Դայեակ Տուրայ Ներսէս, և սա է...:

ՏՐ. Անսա մի ինչ այլ յինէն լուիցես, արբայ, զամենայն. ես եմ քո թշնամին, ես արբայութեանդ սասանեցուցից. աղէ ընդէր յապաղես, սպան զիս, արագարագ խաւարեցո զաչս իմ չտեսանել զոյս, չտեսանել և զքեզ:

ԵՐԶ. Մի այդպէս. հայեաց, Երուանդ, 'ի խընդրուածս իմ. յանցաւոր է, մահու պարտ է, սակայն... ո՛հ, սակայն, եղբայր քո է որ յոտս քո անկեալ կայ. (Ծուր Գնէ). եթէ եղբայր քո զիցն պաշտօնեայ արժանի ինչ է առ 'ի քէն շնորհի, եթէ սիրելի է քեզ արև եղբօրդ՝ շնորհեալ ինձ զկեանս գորա. յիշեա զի սա է իմ ազատարար և կրկին կենսատու անձին իմոյ:

ԵՐԿ. (Յարոյշանէ) Ա՛հ, եղբայր իմ կեանս ինդրէ թշնամոյս: Քո կենսատու է, այլ իմոյ կենացս դարանակալ. զքեզ յանգեալ փրկեաց, զիս կամակար յարևէ հնարեցաւ արկանել. ակամայ բարւոյ չեն վարձք, և կամաւոր չարի պատուհաս կնքեալ 'ի զիցն և 'ի մարդկանէ:

ԵՐԶ. Իսկ զինչ, եթէ և առ քեզ ակամայ իցն յանցուցեալ:

ԵՐԿ. Չիմարց, յիմարեցա՞ր Երուազ, եթէ և սուրայս յանցումն ակամայ, ո՞յր ապա կամաւոր գտցի:

ՏՐ. Յայոյ խելս է նա, արբայ. զի՞ բնաւ լուեա դմա. ես ինքնին լինիմ խոստովան, կամաւոր էր ամենայն. և եթէ թողուս զիս յարձակ, միւսանգամ 'ի պատրաստի ունիմ զզուրիս իմ թօթափել յերկրէ զուժ բռնաւորաց. աղէ ո՞ւմ կաս. սպան զիս, եթէ ինդրես լինել յանգործու:

ԵՐԿ. Տակաւին ժուժկալիցեմ: Լուր, Երուազ. արդ արբայ իօսի, ոչ եղբայր: Իմ ձօնեալ է ուրի տիւ գիցն անմահից զարիւն Տուրայ, չկարեմ շնորհել մարդոյ, թէ և իմ եղբայր էրն: Եւ այս իմ ուխտ անյեղի քոյով ձեռամբ պարտի կատարել իբրև գիցն պաշտօնի. սուսեր միայն իմ իցէ (հանէ). զի և ես գործակից եղէց պատարագին. սա ընկալ. զէն առաջի իմ զգիցն նուէր. (բայ նմա):

ՏՐ. Աւասիկ եմ ես. հայապ, Երուազ, զմէ տասանիս. չհանգուրժեն զիքն արհամարհանացդ:

ԵՐԶ. Ո՛վ դէք, զինչ իցէ պատահումն:

ԵՐԿ. Աղէ փութա հեզուլ նոցա զարիւն թշնամոյս. և յայնժամ տացեն քեզ զիքն պատասխանի:

Երգ. Ո՞ւր այն իցէ թշնամին քո. Տո՛ւր, ա՛հ. (Բէ-
լոսի) զի՛ ևս լսեմ: Գիտեա, եղբայր իմ, զի...
Տր. (Ձգէ շքաթոսի սորի) Լուս լեր, ապա թէ ոչ
ես այժմ անձին առնեմ:

Երգ. Ա՛հ, դաւ է. սուր ծածուկ առ Տուրայ.
Քուրթա, Երուզա, հար զվերագդ:

Երգ. Ո՛հ, եղբայր իմ, բաց զչաւ քո միանգամ...
գիտեմ զի...

Տր. Անաս, մի ևս. տես զի հարկանեմ զսիրտ իմ:
Երգ. Դարձո զսուրդ. ո՛հ երգուքն, ա՛հ երկիւղ:

Անագորոյն երկիւղ, այր հարկանեմ, հանեմ ձեզ
սպանդ արժանի, եթէ այժմ չէ ինձ ժամ մե-
ռանելոյ, կըր իցէ. (Դնէ սորի 'ի սիրտի):

Երգ. Ամփոփեա զձեռն քո. (Բէլոսի) անշուշտ
գործակից է ընդ նմա: Մատ է, խելամուտ եմ ա-
մենայնի, այ անարժան եղբայր: Հապա, Տուր,
եկ դու ինձ, ըստ արժանի քու գազանութեանդ
լեր գահի՞՞՞ եղբորս, կատարեա հրաման մի անու-
րէն, հար մեա 'ի սիրտ դորա զայդ սուսեր. և
ապա ես ինձէն խնդրեցից 'ի քէն զվրէժ գորա
և զիմ, և խնդրեցից և յանձնէ իմնէ:

Տր. Ձերուզ իմ չիք ուրեք տեսեալ յաթոռ
բռնաւորութեան. այս սուսեր մեսցի միայն 'ի
սիրտ բռնաւորաց կամ 'ի սիրտ Տուրայ:

Երգ. Ի բաց կաց յաչաց իմոց, ժպիրհ ապերա-
սան. իմոյ սրոյս պահեալ կայ արիւնդ. առ 'ի
բաց, Միհրան, զսուրդ, և զգա հան ընկեա 'ի
վիհ մի բանտիդ: Ոչ կամեցար դու կատարել
զկամս իմ, գիտեմ ես կարի քաջ լըուքն տալ
բաղձանացս. խնայեցեր ներկանել զբանտս յա-
րենէ ամբարշտին, երդուեալ յարև անմահից,
եթէ ոչ ուղղեացին յարենէ նորա հրապարակք
քաղաքիս. սարսեսլիւր ապա և դու 'ի մահել
սրամուութեան իմոյ նենգաւոր գործօնեայ չա-
րի. (Էլնէ):

Երգ. Մնա ինձ վայրիկ մի ևս. ընդէր է այլ լուել:

Երգ. (Ի հեռոսս) Ոչ ևս լսեմ զբախտս շրթանց:

ՏԵՍԻԼ Ե.

ԵՐՈՒԱԶ, ՄԻՀՐԱՆ:

Երգ. Դարձեալ յերկուացաւ զինէն. կասկածոք
միաք անանջրպետ գահակից է իշխանաւորաց:

Ա՛հ Միհրան, լուսը արգեօք զսպառնալիս Ե-
րուանգայ. գիտիցես զի եղբայր մեր է Տուր,
զոր նա ինձ կամեր տալ սպանանել:

Միհր. Ձինչ ասես. և ընդէր յանգիման չասացեր
արքայի:

Երգ. Աւաղ անմուութեանս. երգմեցոյց զիս Տուր
լուել 'ի նմանէ, ապա թէ ոչ ինքնին տուր գնալ
զիւրովն. ո՛չ իսկ տեսեր զնա աստ ձեռն 'ի սուսեր
եզեալ 'ի ծոցին, զոր մերկացաւ իսկ ապա:

Միհր. Յո՞ գնաց արքայ, ալէ պնդեսցուք զինի
նորա:

Երգ. Երթիցուք պատմել նմա, ոչ ևս լուցից.
գոչեցից յունկն քաղաքիս:

ՏԵՍԻԼ Զ.

ՏՈՒՐ, առաջինքն, ապա ԵՐՈՒԱՆԴ:

Տր. (Վերսոր) Սուսեր մի, սուսեր մի. կատարե-
ցաւ գործն. ա՛հ եղբայր իմ, ինձէն մեռայց, մի
'ի հարուածոց եղբորս, քաջութեամբ մեռայց.
(Ելնա 'ի Միհրան):

Երգ. Վայ զինն:

Միհր. Բարէ:
Երգ. Այ գազան արիւնխխանձ, ո՛ր իցէ եղբայրն
այն անագորոյն. (Դիմէ պարահէ Երուանգայ): Ա՛հ
եղբայր, զի գործեցեր:

Երգ. Թոյլ սուր ինձ հարկանել միւսանգամ,
կրկնել և երեքկնել. (արիւնխ արդ Դիմէ զհե-
Տուրայ):

Երգ. Ա՛հ անաս, զի զեղբայր քո սպաներ. արիւն
հարազատիդ է որ կայլակէ 'ի սրոյ այտի. արիւն
եղբորդ է որ զքե ցայտեցաւ:

Երգ. Ձիւրդ... ո՞րպէս... եղբայր իմ... նենգա-
ւոր գաւառան...

Երգ. Այն ամենայն յանգիտութեան էր. արգ
զըջացեալ էր ընդ մեղանան, և առ ամօթոյ երգ-
մեցոյց զանմուութիւնս իմ լուել զայդ 'ի քէն:

Երգ. Իսկ արդ ո՛չ Արգամայ է դա որդի. ծնունդ
Երազոնայ յանօրէն անկողնոյ. ո՛չ Ներսէհ ապ-
րեցոյց զգա 'ի միջոյ եղբարցն, որպէս լուր հըն-
չեաց 'ի քաղաքիս:

Երգ. Այդպէս է հաւաստի, մեք եմք գորա եղբարք,
Արգամայ և Երազոնայ ծնունդ անիծից. աւա-
սիկ է գիր Երազոնայ... ո՛հ չարասէր բաղք
զիւրդ արգելեր զիս յառաջագոյն ցուցանելնը-
մա. ընկալ և տես:

Տր. (Յեմէնուսու Երուանգայ լուի զլուսովն՝ Տուր ասէ
Վերսորայ). Ո՛հ, զիւրդ յորժամ ցանկալի է ա-
նագանէ մահ. զերջանիկսն միայն գիտէ նա արագ
յափշտակել. արիւն իմ արիւն նենգաւոր՝ արգ
և ինձ նենգէ, չսպառի առ ժամայն զի մի տեսցէ
զիս իւր եղբայր կենդանի:

Երգ. Վայ ինձ. ծանեայ զամենայն. սիրտ իմ ա-
նագորոյն իբր հանդուրժեցես ողորմ յիշատա-
կիդ. աքք իմ ժուժկալէք հայել յաշխարհի
տեսիլն. ո՛վ ձեռն ճիրան պատառող յուամէ՞ խըն-
դրեսցես զվրէժ արեան հարազատիդ, բայց 'ի
քէն, 'ի քէն, 'ի սրտէ աստի... սակայն միթէ ո՛չ
վասն այսորիկ թշնամի իմ էր սա... ո՛չ մահու
պարտաւոր:

Տր. Առէք զիս աստի, տարայք զիս այլուր. հեռա-
ցայց յաչաց նորա:

Երգ. Մնա ինձ, եղբայր իմ, ներեա ինձ զանգի-
տութեան յանցանս, զոր արգ իսկ յանցեայ առ-
քեզ. միւսանց պարտաւոր եմք, ներեսցուք մի-
մեանց. ներեալ քեզ յինէն և քոյին անգիտու-
թեան մեղանք՝ զոր մեղար առ իս և առ աչ-
խարհս, և ածեր 'ի վերայ իմ յանցուածս ան-
հնարինս:

Տր. Առ քեզ արգարև մեղայ յարիւն ընտանի-
սակայն... առ աշխարհս... ոչ կարեմ ասել:
Բռնաւոր թէ և իմ եղբայր... ասելի է ինձ. ե-
թէ առաքինութիւն ինչ բնակէ 'ի սրտի իմում,
ոչ է զթուութիւն առ բռնաւորս. ո՛հ մեռանիմ ա-

ւասիկ... ողջամբ մնա, եղբայր իմ... Երուազ... գու ներեա ինձ զոր անիրաւեցի առ քեզ տարապարտ:

ԵրԳ. Մինչ 'ի շունչ վախճանին ատեա զիս. և ո՞չ ողջունի միոյ արժանի համարեցար զիս, եղբայր իմ. եթէ բռնաւոր եմ, աւասիկ և իմ վախճան մերձեալ է. զնամ զիմագրաւ բիւրաւոր նիղալկաց կեղեքել զայս սիրտ որ 'ի քո արիւն ոչ խընայեաց:

ԵրԶ. Հաշտեաց, եղբայր իմ, հաշտեաց ընդ քում հարազատիդ. և մի զայդ քէն սրտմտութեան տանիր յերեսս քո ընդ քեզ 'ի սանդարամետս 'ի պարս փառաւորեալ ակմբի վէհից զիւցազանց մերոցս նախնեաց: մի յակնարկելն յերեսս քո ամաչեսցեն նոքա:

ՏԵՍԻԼ Է.

ԶԱՐԵՂ, առաջինքն:

ԶԱՐ. Հաս փութա, տէր արքայ... բա՛րէ զարժանի պատուհաս ընկալա՛ւ Տուր:

ԵրԳ. Լուռ լեր. ասա զի՛նդրես, զի՛նչ այդ փոշի մորկեալ զքե:

ԶԱՐ. Ապրեցո զանձն քո. ճակատ ետ Սմբատ, 'ի խոր խոցեցաւ մարտն. մերքն յուսահատեալ բացին զդրունս քաղաքին. այլ ինչ երկարել ոչ ներէ ժամս. ջոկատ մի հզոր քեզ մնայ արտաքոյ:

ԵրԳ. Ա՛հա արդ, եղբայր իմ, կոչէ զիս բաղջն, երթամ արեամբ իմով, արեամբ տան իմոյ սրբել զյանցանս իմ. այսպէս ապրեցուցանեմ ես զանձըն իմ 'ի ձեռաց նոցա. աստղն առաջնորդ իմ կենաց՝ արդ 'ի մուտս խոնարհի, երթամ մեռա նեւ. (Ելա՛նք ընդ Զարէհի):

ՏԵՍԻԼ Ը.

ՏՈՒՐ, ԵՐՈՒՍՃ:

ՏՐ. Ո՛հ 'ի վերջին բանալ աչացս... անկաւ... զարտեանամբքս մէդ... մնա խաղաղութեամբ, եղբայր իմ...

ԵրԶ. Ո՛վ դիք, գալով չափ բանին ձերոյ և մեր երկոցուն կնքեալ է վախճան. մէք եմք հարազատքըն թշնամիք՝ զոր գուժեաց ինձ Արամազդ:

Այն հեղեղք հրափայլ արեանց յերկրէ աստի ոչ ցամաքին,
Թըշնամի հարազատաց թէ չքսպառին ակունք սրտին:

Ի քեզ, եղբայր իմ Տուր, 'ի քեզ կատարեցաւ նախ գուժալից բարբառս. ոչ անագանեսցուք և մէք՝ ընդ հուպ առ քեզ գամք, թողեալ աշխարհի և հոգւոցն 'ի սանդարամետս տարեալ 'ի միասին ահաւոր և տխուր յիշատակ:

ԲԱՆՍԱԼԻՔ

ԲՆՈՒԹԵԱՆ ԵՐԵՒՈՒԹԻՑ

(Տես էրես 158)

Դ. Բնական արգասիք կայծակին:

220 Երբ կայծակը ծառի մը զարնէ կը թափանցէ անոր մէջ, չէ նէ միայն արտաքին մակերևութին մէջ: — Կեղևին և փայտին մէջտեղ կը մտնէ, ուր որ սպիտակուցն է, և ուր որ աւելի առատ հոյզ կ'ըլլայ:

221 Ինչո՞ւ համար կայծակը կ'անցնի ծառի մը փայտին ու կեղևին մէջը: — Որովհետեւ աղէկ հաղորդիչ կ'ուզէ, և ծառի մը լաւագոյն հաղորդիչ մասն է սպիտակուցը:

222 Ի՞նչ է ծառին սպիտակուցը: — Սպիտակուցն է սպինդային գոյութիւն մը որ կը գտուի ծառին կեղևին և բուն փայտային մասին միջոցը. անոր համար սպընդային է՝ որ բուսոց հեղուկները, (որ իրենց համար արեան տեղ կը բռնեն) կարենան վեր ելլալ առանց գժուարութեան:

223 Այսպէս ալ կայծակը մարդու մորթին մէջ կը թափանցէ առանց թափանցելու հեղուկներուն մէջ: — Ոչ, հապա կը թափանցէ մարմնոյն հեղուկներուն մէջ:

224 Ինչո՞ւ համար կայծակը կ'անցնի մարդու մարմնոյն հեղուկներուն մէջըն: — Որովհետեւ ելեքտրականութեան աղէկ հաղորդիչ են քան թէ մորթը. ասոր համար կայծակը չի վազեր մարդու մարմնոյն վրայ՝ այլ ներս կը թափանցէ: (Կենդանեաց և մասնաւորապէս մարդու մարմինը աղէկ հաղորդիչ են ելեքտրականութեան):

225 Ինչո՞ւ համար երբեմն ծառը կ'այրի կայծակէն՝ ինչպէս կրակէ: — Այս բանս այն ատեն կը պատահի երբ ծառը ընդդիմանայ կայծակին վազուկին՝ որ ամպերէն կ'անցնի երկրիս վրայ. որովհետեւ ամեն անգամ որ ելեքտրականութիւնը հանդիպի արգելքի մը՝ կը պատճառէ զօրաւոր ջերմութիւն մը:

226 Ինչո՞ւ երբեմն կայծակը կը խլէ ծառերուն կեղևը: — Որովհետեւ ծառը կ'ընդդիմանայ, կայծակն ալ իր մեքենական բռնութեամբը անոր կեղևը կը կորզէ:

227 Ինչո՞ւ համար կայծակը զարկած ծառին ճիւղերը կը կտորտէ: — Որովհետեւ ելեքտրականութեան մեքենական ուժը խիստ սաստիկ է. ծառերուն ճիւղերն ալ